ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

16 փետրվարի 2023 թվականի N 185 - Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 20-Ի N 33-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 34-րդ հոդվածը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի հունվարի 20-ի «Հայաստանի Հանրապետության սահմանով արտահանվող ապրանքների մաքսային արժեքի որոշման բացատրական նշումները սահմանելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի դեկտեմբերի 5-ի N 2170-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 33-Ն որոշման (այսուհետ՝ որոշում) մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1) որոշման նախաբանում «74-րդ հոդվածի 2-րդ մասով» բառերը փոխարինել «24-րդ հոդվածի 3-րդ մասով» բառերով.

2) որոշմամբ հաստատված հավելվածի (այսուհետ՝ հավելված) 1-ին կետում «78-րդ, 79-րդ, 80-րդ, 81-րդ, 82-րդ, 83-րդ և 84-րդ հոդվածների» բառերը փոխարինել «5-րդ գլխի» բառերով.

3) հավելվածի ամբողջ տեքստում «78-րդ», «79-րդ», «80-րդ», «81-րդ», «82-րդ», «83-րդ» և «84-րդ» բառերը փոխարինել համապատասխանաբար՝ «27-րդ», «28-րդ», «29-րդ», «30-րդ», «31-րդ», «32-րդ» և «33-րդ» բառերով.

4) հավելվածի 3-րդ կետում «85-րդ» բառը փոխարինել «34-րդ» բառով.

5) հավելվածի 6-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«6. Արտահանվող ապրանքների մաքսային արժեքն այդ ապրանքների գործարքի արժեքն է, այսինքն՝ այն գինը, որը փաստացի վճարվել է կամ ենթակա է վճարման այդ ապրանքներն արտահանելու նպատակով վաճառելիս՝ օրենքի 27-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված պայմանների պահպանման դեպքում:»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

16.02.2023
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ